Պարոն/Տիկին ______ *ին*
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

____

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

Խնդրում եմ փեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխափակազմի սփորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապափրասփել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիփություն

*Մ. Մեսրոպյան*______

«07»______2026թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Սեդա Շահինյան,
   - Սերգեյ Աղինյան,
   - Հայրապետ Կարապետյան,
   - Լուսինե Հովհաննիսյան,
   - Զարուհի Ստեփանյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   - հանձնաժողովի անդամ,
   - հանձնաժողովի անդամ,
   - իրավաբանական և լիցենզավորման վարչության պետ,
   - սակագնային քաղաքականության վարչության էլեկտրաէներգետիկական շուկայի բաժնի պետ,
   - միջազգային համագործակցության բաժնի պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Բոնն, Գերմանիա, 2026 թվականի հունիսի 30-ից հուլիսի 1-ը:

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական հանձնաժողովի Եվրոպական հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրենություն (DG ENEST):

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել TAIEX աջակցության գործիքի շրջանակում կազմակերպված՝ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման թեմայով ուսումնական այցին:

6. Քննարկված թեմաները (հարցերը)՝ Ուսումնական այցի ընթացքում Գերմանիայի դաշնային կարգավորող մարմնի՝ Bundesnetzagentur (BNetzA) ներկայացուցիչները ներկայացրին կառույցի կազմակերպական կառուցվածքը, հիմնական գործառույթները և իրավասությունները, ինչպես նաև գործունեության հիմնական ուղղությունները: Մասնավորապես, ներկայացվեցին կարգավորող մարմնի լիազորությունները էլեկտրաէներգիայի, բնական գազի, հեռահաղորդակցության, փոստային ծառայությունների և երկաթուղային տրանսպորտի ոլորտներում, ինչպես նաև տարբեր ստորաբաժանումների միջև գործառույթների բաշխման սկզբունքները: Անդրադարձ կատարվեց նաև BNetzA-ի համագործակցությանը Եվրոպական միության կառույցների, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովի, Էներգետիկայի կարգավորողների համագործակցության գործակալության (ACER), Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի (CEER) և եվրոպական այլ ազգային կարգավորող մարմինների հետ՝ միասնական էներգետիկ շուկայի զարգացման և եվրոպական օրենսդրության արդյունավետ կիրառման համատեքստում:

Այնուհետև ներկայացվեցին ազգային կարգավորող մարմինների անկախության ապահովման հիմնարար սկզբունքները: Քննարկվեցին կարգավորողի ինստիտուցիոնալ, ֆինանսական և գործառնական անկախության ապահովման մեխանիզմները, որոշումների կայացման գործընթացում քաղաքական ազդեցություններից զերծ մնալու, ֆինանսական անկախության կարևորությունը, ինչպես նաև կարգավորող մարմինների հաշվետվողականության և թափանցիկության ապահովման միջազգային փորձը: Ներկայացվեցին նաև Եվրոպական էներգետիկ կարգավորողների խորհրդի (CEER) կողմից մշակված սկզբունքները և դրանց կիրառման առանձնահատկությունները Եվրոպական միության անդամ պետություններում:

Ներկայացվեց շուկայի մոնիթորինգով զբաղվող ստորաբաժանման հիմնական գործառույթները, մոնիթորինգի նպատակները և իրականացվող աշխատանքների շրջանակը: Մասնավորապես ներկայացվեցին շուկայի մասնակիցներից տեղեկատվության հավաքագրման գործընթացները, օգտագործվող տվյալների աղբյուրները, տվյալների ստացման և մշակման մեթոդները, ինչպես նաև դրանց հիման վրա իրականացվող վերլուծությունները: Ներկայացվեց նաև BNetzA Data Hub-ի գործունեությունը և տվյալների

կենտրոնացված մշակման մոտեցումները՝ շուկայի արդյունավետ վերահսկողության, թափանցիկության բարձրացման և շուկայի վարքագծի գնահատման նպատակով:

Ներկայացվեց նաև էլեկտրաէներգետիկական շուկայի մոնիթորինգի վերաբերյալ զեկույցը: Մասնավորապես անդրադարձ կատարվեց շուկայի մոնիթորինգի հիմնական խնդիրներին և կարգավորողի կողմից մշակված և շահագործվող տվյալների հավաքագրման SMARD համակարգին: Վերջինս տվյալների շտեմարան է, որի միջոցով իրականացվում է էլեկտրաէներգետիկական շուկայի ցուցանիշների վերլուծությունը: Փորձագետի կողմից ներկայացվեցին տվյալների հավաքագրման նպատակները և մեթոդները:

Գերմանիայի կարգավորողի REMIT-ի ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացվեց նաև REMIT-ի իրավական շրջանակը՝ առավել մանրամասն կենտրոնանալով ազգային կարգավորողների պարտականությունների վրա: Այս համատեքստում քննարկվեց Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի մասով REMIT-ի հետագա ներդրմանն ու կիրարկմանն ուղղված քայլերը, ինչպես նաև այդ ուղղությամբ ազգային կարգավորողի հիմնական անելիքները:

Հաջորդիվ, կարգավորող մարմնի ներկայացուցչի կողմից ներկայացվեցին ԵՄ-ի և ազգային կարգավորողների կողմից REMIT-ի կիրարկման վերաբերյալ կարգավորման լավագույն փորձը, շուկաների մոնիթորինգի մեթոդները, տվյալների ներկայացմանը և դրանց պաշտպանությանը, ինչպես նաև կիբեռանվտանգությանն ուղղված կանոնները, ազգային կարգավորողների և ACER-ի միջև համագործակցությունը միջպետական առևտրին առնչվող դեպքերում, ինչպես նաև տուգանքների ռեժիմները:

Հանձնաժողովի ներկայացուցիչները նույնպես ներկայացրին էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և շուկայի նոր՝ մրցակցային մոդելի ներդրման ուղղությամբ կատարված քայլերը, շուկայի ազատական մոդելի կիրառման արդյունքում տեսանելի ձեռքբերումները, մասնավորապես՝ միջպետական առևտրի ծավալների աճը, նոր մասնակիցների մուտքը շուկա, սպառման և արտադրության հատվածում առավել օպտիմալ պլանավորումը, հասցեական պատասխանատվության կիրառումը, էլեկտրաէներգիայի ամբողջապես թվայնացված առևտուրը:

Քննարկվեցին նաև շուկայի հնարավոր մանիպուլյացիաների դեպքերի բացահայտման ընթացակարգերը, գործերի քննության կազմակերպման գործընթացը, ինչպես նաև այս համատեքստում BNetzA-ի համագործակցության ձևաչափերը ACER և եվրոպական այլ ազգային կարգավորող մարմինների հետ: Ներկայացվեցին տեղեկատվության փոխանակման մեխանիզմները, համատեղ քննությունների

իրականացման փորձը և միջազգային համագործակցության նշանակությունը սահմանահատող շուկաների արդյունավետ վերահսկողության տեսանկյունից:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև էլեկտրաէներգիայի կուտակիչ համակարգերի (Energy Storage) ինտեգրմանը վերաբերող հարցերը: Մասնավորապես՝ ներկայացվեցին կուտակիչ տեխնոլոգիաների դերը ժամանակակից էլեկտրաէներգետիկական համակարգերում, դրանց մասնակցության հնարավոր ձևաչափերը էլեկտրաէներգիայի տարբեր շուկաներում, ինչպես նաև կուտակիչ համակարգերի ազդեցությունը վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրման, համակարգի ճկունության բարձրացման և հավասարակշռման ծառայությունների զարգացման վրա: Անդրադարձ կատարվեց նաև Գերմանիայում կիրառվող կարգավորման մոտեցումներին և ոլորտի զարգացման հիմնական միտումներին:

Նշվեց, որ Գերմանական փորձի համաձայն՝ կուտակիչ համակարգերի հիմնական գործառույթը շուկայում գների տարբերություններից օգտվելն է (էներգետիկ արբիտրաժ)՝ ցածր գներով էլեկտրաէներգիա գնելով և այն ավելի բարձր գներով վաճառելով: Բացի այդ, կուտակիչները լայնորեն օգտագործվում են հաճախականության առաջնային կարգավորման (Frequency Containment Reserve – FCR) ծառայությունների մատուցման համար:

Կուտակիչ համակարգերը կիրառվում են նաև սեփական արտադրած էլեկտրաէներգիայի ինքնասպառման մակարդակի բարձրացման, սպառողների կողմից էլեկտրաէներգիայի գնման ծախսերի օպտիմալացման, վերականգնվող էներգիայի արտադրության աջակցության մեխանիզմների առավել արդյունավետ օգտագործման, ինչպես նաև ցանցային վճարների նվազեցման նպատակով:

Ներկայումս Գերմանիայում մշակվում են նոր կարգավորումներ (MiSpeL), որոնք հնարավորություն կտան նույն կուտակիչ համակարգին միաժամանակ իրականացնել նշված բոլոր գործառույթները՝ համապատասխան հաշվառման և վերահսկման մեխանիզմների կիրառմամբ:

BNetzA-ի գնահատմամբ՝ կուտակիչ համակարգերի համար առանձին պետական աջակցության մեխանիզմների անհրաժեշտություն չկա, քանի որ դրանք կարող են եկամուտ ստանալ շուկայի տարբեր հատվածներում գործունեություն ծավալելու միջոցով:

Նշվեց, որ ցանցի տեսանկյունից հնարավոր չէ առանձնացնել այնպիսի տեղակայման վայրեր, որոնք մշտապես առավել նպաստավոր կլինեն կուտակիչ համակարգերի համար: Քանի որ դրանք կարող են ինչպես սպառել, այնպես էլ արտադրել էլեկտրաէներգիա, տարբեր իրավիճակներում կարող են և՛ նվազեցնել, և՛ ավելացնել ցանցի

ծանրաբեռնվածությունը: Ազատականացված շուկայում դրանց վարքագիծը մեծապես կախված է շուկայական գների փոփոխություններից, ինչը դժվարացնում է ցանցային օպերատորների կողմից բեռնվածության կանխատեսումը: Այդ պատճառով Գերմանիայում քննարկվում են կուտակիչ համակարգերի աշխատանքի որոշ սահմանափակումների և համակարգման տարբեր մեխանիզմներ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կուտակիչ համակարգերի կողմից էլեկտրաէներգիայի լիցքավորման և հետագա մատակարարման ընթացքում առաջացող կրկնակի ցանցային վճարների խնդրին: Գերմանիայում այն լուծվում է տարբեր կարգավորումների միջոցով: Այն կուտակիչ համակարգերը, որոնք զբաղվում են բացառապես էներգետիկ արբիտրաժով կամ հավասարակշռման ծառայությունների մատուցմամբ, ազատվում են ցանցային վճարներից, իսկ բազմաֆունկցիոնալ կուտակիչ համակարգերի համար կիրառվում են հատուկ հաշվառման մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս առանձնացնել արբիտրաժային գործառնությունների համար օգտագործված էլեկտրաէներգիայի ծավալները:

Կուտակիչ համակարգերի կառուցման համար Գերմանիայում գործում են երկու հիմնական թույլտվության մակարդակներ՝ շինարարական և բնապահպանական, ինչպես նաև ցանցին միացման տեխնիկական թույլտվություն: Վերջին տարիներին շինարարական ընթացակարգերը զգալիորեն պարզեցվել են, սակայն ցանցին միացման հարցերը շարունակում են մնալ հիմնական մարտահրավերներից մեկը՝ հատկապես կուտակիչ համակարգերի նկատմամբ մեծ հետաքրքրության պայմաններում: Այդ պատճառով նույնիսկ փոքր հզորության կուտակիչ կայանների համար անհրաժեշտ է իրականացնել ցանցի տեխնիկական համատեղելիության գնահատում, և դրանց համար ամբողջական բացառություններ նախատեսելը նպատակահարմար չի համարվում:

Ընդհանուր առմամբ, գերմանական փորձը ցույց է տալիս, որ էլեկտրաէներգիայի կուտակիչ համակարգերը պետք է հնարավորինս գործեն մրցակցային շուկայական պայմաններում, իսկ կարգավորման հիմնական նպատակները պետք է լինեն շուկայի արդյունավետ գործունեության, ցանցի հուսալիության և ներդրումների խթանման միջև հավասարակշռության ապահովումը:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Միջոցառման ընթացքում Հանձնաժողովի ներկայացուցիչները ներկայացրին էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և շուկայի նոր՝ մրցակցային մոդելի ներդրման ուղղությամբ կատարված քայլերը, շուկայի ազատական մոդելի կիրառման արդյունքում տեսանելի

ձեռքբերումները, մասնավորապես՝ միջպետական առևտրի ծավալների աճը, նոր մասնակիցների մուտքը շուկա, սպառման և արտադրության հատվածում առավել օպտիմալ պլանավորումը, հասցեական պատասխանատվության կիրառումը, էլեկտրաէներգիայի ամբողջապես թվայնացված առևտուրը: Ներկայացվեցին նաև Հայաստանում «Էներգետիկայի մասին» օրենքում իրականացված վերջին փոփոխությունները, որոնցով նախատեսված է վեց ամիս հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի համապատասխանեցման համար: Նշված օրենքով նախատեսված են նաև կուտակիչ կայանների ներդրման առանձնահատկությունները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ուսումնական այցի ընթացքում կայացած քննարկումների արդյունքներով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքների նախագծերի մշակման ժամանակ քննարկված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին REMIT-ի կարգավորումներով նախատեսված առանձնահատուկ մոնիթորինգի, հետազոտության և պատասխանատվության միջոցի կիրառման իրավասություններով օժտելու նպատակահարմարությունը, ինչը հնարավորություն կտա կանխել կամ անհրաժեշտության դեպքում առավել խիստ արձագանքել մեծածախ շուկայի մասնակիցների շուկայում չարաշահումների (ներքին առևտրի և շուկայի մանիպուլյացիայի) վարքագծին, առաջարկում ենք դիտարկել Գերմանիայի լավագույն փորձի հետագա ուսումնասիրությունը և Հայաստանում դրա ներդրման հնարավորությունը:

Գործուղվող ---------- 07.07.2026թ. **Ս. Աղինյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 07.07.2026թ. **Ս. Շահինյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 07.07.2026թ. **Հ. Կարապետյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 07.07.2026թ. **Լ. Հովհաննիսյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 07.07.2026թ. **Զ. Ստեփանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

<< վարչապետի
2018 թ.

սեպտեմբերի 19-ի
N1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 480-ԳՔ, Հրաման 481-ՀՆ 17.06.2026թ.

<< ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սերգեյ Աղինյան**

<< ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սեդա Շահինյան**

<< ՀԾԿ հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության պետ՝ **Հայրապետ Կարապետյան**

<< ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության էլեկտրաէներգետիկական շուկայի բաժնի պետ՝ **Լուսինե Հովհաննիսյան**

<< ՀԾԿ հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ՝ **Զարուհի Ստեփանյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Բոնն / Գերմանիա /**

5. Գործուղման ժամկետները **29.06.2026-02.07.2026 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, **օրապահիկ՝ 363 եվրո** և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ՝ 85 եվրո** և այլն)

(*<< կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սերգեյ Աղինյան	Սեդա Շահինյան	Հայրապետ Կարապետյան	Լուսինե Հովհաննիսյան	Զարուհի Ստեփանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս)						-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)						-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)						
	Վճարը 1 օրվա համար (դրամ)						
	Օրերի քանակը						
	Ընդամենը (դրամ)						
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	21.25	21.25	21.25	21.25	21.25	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	8,968	8,968	8,968	8,968	8,968	
	Օրերի քանակը	4	4	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	35,872	35,872	35,872	35,872	35,872	179.360
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար						
	Մուտքի արտոնագրի վճար						-
	Այլ ծախսեր (ճանապարհածախս)						-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		35.872	35.872	35.872	35.872	35.872	179.360

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ

03.07.2026թ.